ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ

2017 թ. հունիսի 8-ին 93 տարեկանում կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, Պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Սերգեյ Ներսեսի Սարինյանը:

Ծնվել է 1924 թ. նոյեմբերի 17-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Սեյդիշեն (այժմ՝ Խաչեն) գյուղում: 1941-1942 թթ. ուսուցիչ է եղել ծննդավայրի դպրոցում: 1942 թ. զորակոչվել է բանակ: Ռազմաճակատում վիրավորվել է 1943 թ. և զորացրվել: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» և «Մարտական ծառայությունների համար» մեդալներով:

1944 թ. սեպտեմբերին ընդունվել է Երևանի պետհամալսարանի լեզվագրական ֆակուլտետը: 1949 թ., գերազանցության դիպլոմով ավարտելով այն, ընդունվել է Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրա: 1950-ից մինչև կյանքի վերջը աշխատել է Գրականության ինստիտուտում: 1960-2016 թթ. ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի վարիչն էր:

1953 թ. «Ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» թեմայով պաշտպանել է թեկնածուական, իսկ 1967 թ.՝ «Հայկական ռոմանտիզմ» թեմայով դոկտորական ատենախոսություն: 1970 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 1990 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ իսկական անդամ:

Ս. Սարինյանի գիտական գործունեության սկիզբը համընկավ սկսվող «ձնհալի» հետ, երբ հրամայական էին դարձել հարկադրական կաղապարների մեջ դրված պատկերացումները և մի շարք հեղինակներին տրված անարդար և ոչ ճիշտ բնորոշումները վերանայելը: Ս. Սարինյանն այս կարևոր գործին ձեռնամուխ եղավ գրականության պատմաբանի անաչառ մոտեցմամբ: Հայ գրականության պատմության, գաղափարագեղարվեստական արժեքների, գրական և ազգային աշխարհայացքի հարցերը նա քննեց ճշմարիտ ասելիքի այն առավելագույն աստիճանով, որը հնարավոր էր խորհրդային գաղափարական սահմանափակումների և արգելքների շրջանակում: Չնայած այս ամենին՝ տասնամյակների հեռավորությունից Սարինյանի գրածները այսօր ևս տեսական ուղենիշ են ծառայում, իսկ ազգային-գաղափարական հարցադրումների առումով մասն են կազմում 1960-80-ական թթ. ստեղծված արժեքային այն համակարգի, որը նախապատրաստեց 1988 թ. ազգային զարթոնքը: Առաջին՝ «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» (Ե., 1955 թ.) գրքում համակողմանիորեն քննվում է հայկական ռեալիզմի սկզբնավորումը՝ սկսած Աբովյանից և Նալբանդյանից մինչև 1850-ական թթ. արևմտահայ միջավայրում գրված, ինչպես նաև ռեալիզմի տեսությանը և գրական մեթոդին վերաբերող հարցերի արծարծումը

ժամանակի քննադատական մտքի կողմից: Շատ կարևոր էր այն հարցադրումը, որ միջնադարում ռեալիզմը հանդես է գալիս տարերային ձևով և ոչ որպես գիտակցված ուղղություն: Առաջ քաշված այն դրույթը, որ կյանքի ռեալիստական նկարագրությունները դեռևս ռեալիստական գրականություն չեն, 1960-ական թթ. համակողմանիորեն զարգացրեց ակադ. Դմիտրի Լիխաչյովը: Հաջորդ՝ «Ռաֆֆի» (Ե., 1957 թ.) ուսումնասիրության մեջ գրողի ստեղծագործությունները ոչ միայն թեմատիկ համակարգվածությամբ են վերլուծվում, այլև մեծ վիպասանի ծրագրային-քաղաքական վեպերին նվիրված «Ազատագրական պայքարի արձագանքները» և պատմավեպերը քննող «Դեպի պատմական անցյալը» գլուխները, կարևորվելով գրականագիտական վերլուծության տեսանկյունից, միաժամանակ XIX դարավերջի հայ ազատագրական պայքարի և անցյալի պատմահայեցողության վերագնահատման ճանապարհի առաջին կարևոր քայլերից էին:

Ռաֆֆու գրական ժառանգությանը մոտ երեք տասնամյակ անց գրականագետն անդրադարձավ «Ռաֆֆի. գաղափարների և կերպարների համակարգը» (1985 թ.) ուսումնասիրության մեջ: Գրքի ենթավերնագիրն իսկ հուշում է աշխատանքի ուղղվածությունը: 1957 թ. հրատարակությունը առաջին ամբողջական ուսումնասիրությունն էր մեծ պատմավիպասանի մասին, որտեղ գիտական պարբերացմամբ քննվում էին նրա կյանքի և ստեղծագործության գլխավոր փուլերը: Սարինյանի բնորոշմամբ՝ առաջին աշխատանքում վերլուծվում էր Ռաֆֆու «իրերի աշխարհը», իսկ 1985 թ. տպագրված երկրորդ գրքում ինքը գործ է ունե-ցել գրողի «սիստեմների» աշխարհի հետ:

Հայ գրականագիտության կոթողային աշխատանքներից է «Հայկական ռոմանտիզմ» (1966 թ.) ուսումնասիրությունը: Գրքի ծավալուն ներածության մեջ համակողմանիորեն ներկայացվում են ռոմանտիզմի տեսությունը՝ որպես գրական, փիլիսոփայական և գեղագիտական աշխարհայացք, ռոմանտիզմի պատմահայեցողությունը և ռոմանտիկական գրականության հերոսին բնորոշ հատկանիշները: Այնուհետև անցում է կատարվում հայկական ռոմանտիզմին և վերհանվում վերջինիս յուրահատկությունները՝ կապված ազգային-ազատագրական ձգտումների և դրանցով պայմանավորված պատմահայեցողության հետ:

Հայկական ռոմանտիզմի պատմությունը վերլուծվում է կլասիցիզմից կատարված անցմամբ՝ Հարություն Ալամդարյանից մինչև Ռաֆֆի: Տպագիր հրատարակությունների և ժամանակի հայ մամուլի պարփակած հսկայական նյութի հիման վրա հայկական ռոմանտիզմի գրական ընթացքը ներկայացվում է պատմական զարգացմամբ՝ 1830-ական թթ. մինչև 1880-ական թթ. և աշխարհագրական ընդգրկմամբ՝ Արևելյան Հայաստանից ու արևմտահայ միջավայրից մինչև Ստիյուռքի հայկական գաղթավայրերը:

Որպես գրականության պատմաբան՝ նա չի գրում միայն գրական մեծությունների՝ Աբովյանի, Ալիշանի, Պատկանյանի, Դուրյանի և Ռաֆֆու մասին, այլ պատկերում է նաև հայ հասարակական մտքի ու գրական շարժման ողջ միջավայրը՝ «հասարակական գործիչների մտածումները և գրական նշանակալից հետագիծ չթողած հեղինակների գեղարվեստական գործերը, որոնք կուտակվելու և գրական նոր դրսևորումներով արտահայտվելու էին ռոմանտիզմի հայ դասականների երկերում»:

Գրքի վերջաբանում Սարինյանը քննում է ռոմանտիզմի տարատեսակ դրսևորումները XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ ռեալիստական գրականության մեջ՝ այն հարցադրմամբ, որ «սկսվող ռեալիզմին բնորոշ է հոգեբանական ռման-

տիզմը, ապրումների հոգեբանական ֆետիշացումը»: Հեղինակը բացահայտում է անգամ «ամենամաքուր» և զուտ գրական համարվող ստեղծագործությունների պատմաքաղաքական ակունքները. «20-րդ դարի հեղաբեկումները նորից առաջ են քաշում համաշխարհային թախիծ, տիեզերական առեղծվածները և տրտմագին էլեգիա, հզոր անհատի և հեթանոսական ուժեղ աստվածների որոնում»:

Հայկական ռոմանտիզմի պատմությանը նվիրված հատորն ավարտվում է դասական ռոմանտիզմի շրջանով և վերջինի գաղափարական մարմնավորումը դարձած Ռաֆֆու ստեղծագործություններով:

Ուշ ռոմանտիզմին և նրա վառ ներկայացուցիչ Մուրացանին է նվիրված նույնանուն ուսումնասիրությունը (1976 թ., վերահրատ.՝ 2004 թ.): Այստեղ նորից անդրադարձ է կատարվում հայկական ռոմանտիզմի պատմությանը, որը ներկայացվում է հետևյալ պարբերացմամբ. **դասական ռոմանտիզմ՝** *1830-1880-ական թթ.,* **ուշ ռոմանտիզմ՝** *1880-1890-ական թթ.,* **նեոռոմանտիզմ՝** *1900-ական թթ.:*

Գիտնականը ուշ ռոմանտիզմի, այդ թվում և Մուրացանի, ստեղծագործությունների բնորոշ հատկանիշն է համարում գրական ստեղծագործությունների սոցիալ-պատմական բովանդակության և ընդհանուր աշխարհայացքային ոլորտի նեղացումը: Ասվածի բնորոշ օրինակն են Մուրացանի ստեղծագործությունները, որտեղ, ինչպես նշում է նա, նկատելի է հերոսի գործունեության աշխարհագրական սահմանափակվածությունը: Եթե Ռաֆֆու «Կայծերի» հերոսները, տարված ազգային-ազատագրական պայքարի վեհ գաղափարներով, գործունեություն էին ծավալում ողջ Արևմտյան Հայաստանում, ապա Մուրացանի հերոսները փորձում էին շատ ավելի համեստ ծրագրեր իրականացնել այս կամ այն գյուղում:

Պատմական նույն խորաթափանցությամբ Սարինյանը վերհանել է նաև ռոմանտիզմի վերջին փուլի՝ նեոռոմանտիզմի տիպաբանական հատկանիշները, որ «հակված էր օտարելու դասական ռոմանտիզմի որոշ սկզբունքները՝ հակադրելով դրանք սիմվոլիզմի և XX դարասկզբի գրական նորահայտ այլ ուղղությունների գեղագիտական ու փիլիսոփայական ըմբռնումներին»:

Դարձյալ Ռաֆֆու հետ զուգահեռով նշվում է, որ համիդյան ջարդերով կորսված կանգուն Հայաստանի ,Կայծերումե առկա ռոմանտիկական կերպարը փոխարինվեց փշրված երկրի երևակայական Նահիրիով՝ «որպես հայրենիքի մի վերջին մտապատրանք»:

Սարինյանը պարբերաբար հանդես է եկել նաև գրականության պատմությանը, տեսությանը և գրաքննադատությանը վերաբերող տարբեր հոդվածներով, որոնք մի որոշ ժամանակ անց հրատարակվում էին առանձին ժողովածուներով: Դրանք գիտական պարբերականներում և մամուլում տպագրված նյութերի պարզ և մեխանիկական հանրագումարը չէին: Ներկայացվելով որոշակի խորագրերի ներքո և ոչ թե ըստ ժամանակագրության՝ այդ ժողովածուները դառնում են արդեն ներքին միասնություն ունեցող, գրքում գրական-գեղարվեստական մի քանի առանցքների շուրջ կենտրոնացած ստեղծագործություններ: Այս սկզբունքով են կազմվել «Գրական դիտողություններ» (1964 թ.), ,Սերունդներ և ավանդ-ներե (1984 թ.), «Գեղարվեստական գրականության պատմականությունը» (1979 թ.) ժողովածուները: Նույնը վերաբերում է «Հայոց գրականության երկու դարը» հատորաշարին, որն սկզբնապես ծրագրված էր հրատարակելու երկու հատորով, սակայն 1980-ական թթ. վերջից դարձավ հեղինակի կյանքի յուրօրինակ ուղեկիցը՝ ամեն

հատորում վերը նշված սկզբունքով ամփոփելով մի քանի տարիների հրապարակումները:

2015 թ. լույս տեսավ 6-րդ հատորը: Սարինյանի վերջին երկու տարիների հրապարակումները և չտպագված նյութերը հիմք են տալիս ասելու, որ գրականության ինստիտուտը կկազմի վերջին՝ 7-րդ հատորը:

Շնորհիվ նման կառուցվածքի՝ այս բոլոր ժողովածուներում միաժամանակ հանդես են գալիս հայ գրականության պատմաբանն ու տեսաբանը և ժամանակակից գրականության քննադատը: Հիշյալ ժողովածուները վերհանում են ևս մեկ զարմանալի իրողություն: Դրանցում տեղ գտած հոդվածներից երևում է, որ Սարինյանն արձագանքել է յուրաքանչյուր նոր գրողի ստեղծագործական առաջին քայլերին և երիտասարդ գիտնականի առաջին ուսումնասիրություններին: Սարինյանի դրվատած որևէ երիտասարդ հեղինակ այսօր ճանաչված անուն է մեր գրականության և գրականագիտության մեջ:

Հայաստանի Հանրապետության անկախացումը հնարավորություն տվեց անդրադառնալու այն գրողների ստեղծագործություններին, որոնց մասին, որպես դաշնակցականների, թույլ չէր տրվում գրել: Խորհրդանշական է, որ ՀՀ անկախացումից հետո առաջին հեղինակը, որի մասին գրել է Սարինյանը, Լևոն Շանթն է: 1991 թ. լույս տեսած գրքի ներածության մեջ նախ թվարկվում են Շանթի ստեղծագործությունների մասին մինչ այդ հայտնված կարծիքները, և, որ ամենակարևորն է, նշվում է, թե դրանցից յուրաքանչյուրը ժամանակի հասարակական-քաղաքական ինչ գործոններով է պայմանավորված եղել:

Սարինյանը մերժում է այն տեսակետը, որ Շանթի անհատապաշտությունը և աղերսները Շոպենհաուերի ու Նիցշեի փիլիսոփայությանը հետադիմական են և անկումային գրականության ազդեցություն:

Հայ հասարակական-քաղաքական մտքի նախորդ ողջ ընթացքը հանրագումարի բերելու, ինչպես նաև 1990-ական թվականների քաղաքական իրավիճակով պայմանավորված, անընդունելի և պարզունակ, երբեմն անգամ կիսագրագետ տարբեր կարծիքները հերքելու համար գրականագետը հանդես է գալիս ,Հայ գաղափարաբանություն. Պատմաքննական տեսություն (Ե., 1998) գրքով: Դեռևս 1991 թ. գրած «Մտավորականությունը և արդի ազգային շարժումը» հոդվածում նա նշում էր, որ հեղափոխությունները կարող են կատարվել մեկ օրվա մեջ, սակայն նախապատրաստվում են տևական ժամանակի ընթացքում:

Ուսումնասիրության մեջ ժամանակային պարբերացման է ենթարկվում հայ գաղափարաբանության ընթացքը՝ միջնադարյան հայ ազատագրական որոնումներից մինչև հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը, ապա Խորհրդային տարիներին և անկախության հռչակումից հետո: 2005 թ. լույս տեսավ գրքի տեսական հարցադրումներով առավել հարստացված և բանավիճային մասը հանված երկրորդ հրատարակությունը՝ «Հայոց ազգային գաղափարաբանություն. Պատմաքննական տեսություն»:

Սարինյանի գիտական և ընթերցողական հետաքրքրությունների կենտրոնում էր նաև արդի գրական ընթացքը: Նույն պատասխանատվությամբ էր նա գրում թե՛ հայ գրականության դասականների և թե՛ այսօրվա հեղինակների մասին:

Ժամանակակից գրականությունը ևս նա վերլուծում էր պատմա-հասարակական մեծ ընդհանրացումներով, որի բնորոշ օրինակներն են Զորի Բալայանին նվիրված «Շարունակվող լեգենդ» և Վարդան Հակոբյանի բանաստեղծական

աշխարհը ներկայացնող «Բանաստեղծի հայտնությունը» (Ստեփանակերտ, 2015) աշխատանքները:

Վերջին տարիներին շարունակելով հետևել արդի գրականության ընթացքին և լույս տեսնող գրականագիտական ուսումնասիրություններին՝ նա, սակայն, ամբողջապես ապրում էր հայ գրականության պատմության ակադեմիական նոր բազմահատորյակի ստեղծման աշխատանքներով: Նրա խմբագրությամբ լույս տեսավ 3-րդ հատորը (2015 թ.), որն ընդգրկում է հայ գրականության պատմությունը նոր շրջանից մինչև Հակոբ Պարոնյան և Ռաֆֆի:

Գրականության ինստիտուտի կողմից մինչ այդ հրատարակված «Հայ նոր գրականության պատմության» մեծադիր 5 հատորներում հանգամանալից շարադրանքով ներկայացվում են գրականության պատմության ընթացքը, այս շրջանի հեղինակների կյանքն ու գործունեությունը: Գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծությունը տրվում է այուժեների մանրամասն նկարագրությամբ: Նոր հրատարակության մեջ այդ 5 հատորները խտացված են 2 հատորում՝ ներկայացնելով գրականության պատմության ընդհանրացված տեսությունը:

Սարինյանի ջանքերի շնորհիվ մասամբ ավարտվել են նաև 4-րդ հատորի աշխատանքները: «Հայ նոր գրականության պատմության» հինգհատորյակը գրվել է նրա անմիջական ղեկավարությամբ, և հեղինակային խումբը 1980 թ. արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: Նրա ղեկավարությամբ և խմբագրությամբ են ստեղծվել նաև երկհատոր «Հայ քննադատության պատմությունը» և «Հայ վեպի պատմությունը»:

Վաստակաշատ գիտնականը հեղինակ է նաև դպրոցական և բուհական մի շարք դասագրքերի, ղեկավարել է երեք տասնյակից ավելի ասպիրանտների և հայցորդների թեկնածուական ատենախոսությունները:

Ի նշան գիտական գործունեության՝ նա 1985 թ. ստացել է գիտության վաստակավոր գործչի կոչում, 2005 թ.՝ ՀՀ նախագահի մրցանակ, պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» երկրորդ աստիճանի, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» և ԼՂՀ-ի ,Վաչագան Բարեպաշտե շքանշաններով:

Սերգեյ Սարինյանն իրեն ճանաչողների հիշողության մեջ կմնա որպես սկզբունքային գիտնական, որը գիտական փաստերի հիման վրա կատարվող եզրահանգումները միշտ վեր է դասել ժամանակի թելադրած ձևախեղումներից: Նրա համար գրականությունը ոչ միայն գիտական հետազոտության առարկա էր, այլև կյանքի իմաստ և կեցության ձև:

ԴԵՎՐԻԿՅԱՆ Վ. Գ.
Բանասիրական գիտությունների դոկտոր